«ՀԱՅՐԵՆԻՔ - ՍՓՅՈՒՌՔ ԿԱՄՈՒՐՋ» ՀԿ
Երևան, (091) 40-23-14

30 Սեպտեմբեր, 2005թ.

Երեւանի Քաղաքապետ
պրն. Ե. ԶԱԽԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Զախարյան

Երեւանի քաղաքապետի 2004թ. օգոստոսի 28-ի հ.3318-Ա եւ 2005թ. հունիսի 14-ի հ. 1283-Ա որոշումներով "Հայրենիք – Սփյուռք կամուրջ" հասարակական կազմակերպությանը, Երեւանի Ազատության պողոտայի եւ Բաբայան փողոցի հատման մասում հյուրատան շինարարություն իրականացնելու նպատակով, անհատույց մշտական օգտագործման համար տրամադրվել է 12000.0 քմ մակերեսով հողամաս:

Ներկայումս, մեր կազմակերպությունը, միջոցների սղության պատճառով չի կարող ամբողջ մակերեսով իրականացնել ծրագրված շինարարական աշխատանքները: Այդ իսկ պատճառով "Հայրենիք – Սփյուռք կամուրջ" հասարակական կազմակերպությունը հրաժարվում է իրեն պատկանող 12000.0քմ հողամասի 6000.0քմ մակերեսով հողամասից հօգուտ "Սուրբ Լազար" առողջապահական հասարակական կազմակերպության, որը առաջիկայում մեր երկրի բնակչության համար շատ կարեւոր եւ անհրաժեշտ առողջապահական եւ սոցիալական խնդիր է լուծելու:

Հարգանքներով՝

Սիմոն-Եզնիկ Բալյան
"Հայրենիք – Սփյուռք կամուրջ"
հասարակական կազմակերպության
նախագահ

5/7525 » 14 10 2005
44415